Գործ թիվ ԵԴ2/34242/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

20.10.2023թ. *ք. Երևան*

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի /այսուհետ՝ Դատարան/ դատավոր Տ.Ստեփանյանս, ուսումնասիրելով «Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումին և դրան կից ներկայացված փաստաթղթերին,

ՊԱՐԶԵՑԻ

«Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ ընկերությունը 16.10.2023թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության և «Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ ընկերության միջև 01.03.2023թ. կնքված «ՀՀ Ո ԷԱՀՄՁԲ-ՃՈ 2023/Գ/ԷԼՌԵԳ» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի կողմից միակողմանի լուծելու մասին 20.09.2023թ. որոշումն անվավեր ճանաչելու, ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի 02.10.2023թ. «Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

17.10.2023թ. հայցադիմումը հանձնվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Տ. Ստեփանյանին:

Հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

«Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության և «Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ ընկերության միջև 01.03.2023թ. կնքված «ՀՀ Ո ԷԱՀՄՁԲ-ՃՈ 2023/Գ/ԷԼՌԵԳ» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի կողմից միակողմանի լուծելու մասին 20.09.2023թ. որոշումն անվավեր ճանաչելու, ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի 02.10.2023թ. «Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԴԱՏԱՎՈՐ **Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**